

# ԼՂԻՄ. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳՍ

Ինչպես հաղորդել ենք, օգոստոսի 18-ին Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարն ընտրեց Ազգային խորհուրդ: Ազգային խորհուրդը իր անդրանիկ նիստում ընտրեց նախագահություն՝ բաղկացած 17 հոգուց, նախագահության նախագահ ընտրվեց ԽՍՀՄ ժողովրդական ղեկավարատ, Մարտունու կուսընկերության առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը: Նախագահի տեղակալներն են ժողովրդական վերահսկողության մարզային կոմիտեի նախագահ Վլադիմիր Քովմասյանը և Ստեփանակերտի կուսընկերության առաջին քարտուղար Վլադիմիր Աթաբեկյանը: Խորհրդի նախագահության կազմում ընտրված են Մարտակերտի, Հաղործի, Ասկերանի կուսընկերության քարտուղարներ, կուսակցական, խորհրդային պատասխանատու աշխատողներ, հասարակական կազմակերպությունների, հասարակայնության ներկայացուցիչներ:

Ստեփանակերտում մեր թերթի սեփական թղթակիցը օրերս գրույց ունեցավ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հետ: Այն վերաբերում է Ազգային խորհրդի աշխատանքներին:

ԹՂԹ.— Ղարաբաղյան շարժումը արդեն 18 ամիս գոյապայման է մեզ է: Դեմոկրատացման, հրապարակայնության, բացախոսության, քաղաքական և տնտեսական կյանքի ներառման բարդ ժամանակաշրջան ենք ապրում: Ծանձնացման տարիներին տիրապետող ինքնակառավարման փուլում, մաքուր Վաչագանի և Գրիգորյանի արժեքները, ինչպես արցախցիներն են ասում, դեմ է անել մի ժեռ ֆաբլի, առաջ բերելով ազգամիջյան սուր բարդություններ, բացօթյա քրեամահի առաջացրել երկու հարևան ժողովուրդների միջև: Պարզ ասենք՝ այժմ աղբյուրակալ մի խումբ ազգայնամտներ հրապարակայնորեն սառը պատերազմ են ճայտարարել հայ ժողովրդին և ռուսներին: Ենթադրյալում դառաբաղյան շարժումը ոչնչացնելու, խեղդելու: Հենց դա էլ անելանելի վիճակի մեջ է դրել Արցախ աշխարհի բնակչությանը: Արցախցիները իրենց բողոքը հայտնեցին ֆաղափական պայմանի ծայրահեղ մեթոդով. մայիսի 3-ից մարզում գործադուլ է: Շուրջ 3,5 ամիս: ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն փաստորեն շարունակում է «գործել» նախորդ տասնամյակների ֆաղափական քայլերի: Կոմիտեն վերածվել է խաբեության ֆոլի, ծածկույթի, որի հետևում արվում են վատ գործեր: Մարզը մնացել է անտեր, անտիրական:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ.— Հենց նման իրավիճակը մեզ ստիպեց խորհրդակցել շրջանային, քաղաքային, կուսակցական և խորհրդային մարմինների ղեկավարների հետ, մի միջոց գտնել մարզին տեր կանգնելու համար: Պատմության դասերից ելնելով՝ հրավիրվեց մարզի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների հավաք-համագումար, որն ընտրեց Ազգային խորհուրդ՝ հղած ձևերի մեջ ամենաընդունելին: Համագումարն ընդունեց որոշում, ղեկավարացիա, դիմումներ հղեց հատուկ շրջանի պարետին, խորհրդային բանակի և ԽՍՀՄ ՆԳՄ ստորաբաժանումների սպաներին և զինվորներին: Դիմում հղվեց նաև աղբյուրակալների ժողովրդին՝ արցախյան բնակչության պահանջները ճիշտ ըմբռնելու, ուղղորդելու խաղաղության ու հանգստությանը վերականգնելու, ծառայած բոլոր կոնֆլիկտները խաղաղ ճանապարհով լուծելու վերաբերյալ:

Համագումարը մարզի բնակչությանը կոչ արեց զաղարեցնել գործադուլները և Ազգային խորհրդին պարտավորեցրեց ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները մարզի ամբողջ տարածքում աշխատանքային նորմալ ուղի վերականգնելու համար:

Ազգային խորհուրդը և նրա նախագահությունը այս օրերին

ձգտում են մարզի բոլոր շահագրգռված կազմակերպությունների ուժերը համախմբել՝ լիովին իրագործելու համագումարի որոշումը. մարզը ստեղծված իրավիճակից դուրս բերել, համախմբված ու միասնական ուժերով շարունակել պայքարը մեր միակ գլխավոր նպատակին հասնելու՝ Արցախ աշխարհը մայր Հայաստանին վերամիավորելու համար:

ԹՂԹ.— Բայց ի՞նչ իրավասություններ ունի Ազգային խորհուրդը:

Վ. Գ.— Ազգային խորհուրդը ժողովրդական խորհուրդ է, որն արտահայտում է ժողովրդի կամքը, իսկ մեր պետությունն ինքը ժողովրդապետություն է: Ժողովրդի կողմից ընտրված պատվիրակները իրենց համագումարում որոշում ընդունեցին մինչև ժողովրդական ղեկավարության մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը ընտրել Ազգային խորհուրդ և ներքան հանձնել բոլոր ոլորտներում մարզի կառավարման ղեկավարությունը: Նրա ընդունած բոլոր որոշումները, կարգադրությունները պարտադիր են մարզի տարածքում ապրող և գործող բոլոր քաղաքացիների համար: Ազգային խորհրդի նախագահությունը հանձնում է 78 հոգուց բաղկացած Ազգային խորհրդի առաջ, իսկ Ազգային խորհուրդը՝ մշտական գործող իր համագումարի առաջ:

ԹՂԹ.— Բնակչության մեջ առաջ են եկել տարակարծություններ գործադուլի զաղարեցման վերաբերյալ...

Վ. Գ.— Արցախցիներ աշխատասեր մարդ է, հացի, ջրի պահանջին հավասար՝ աշխատանքը նրա համար կենսական պահանջ է: Մարդ առանց աշխատանքի կարող է հոգեկան ծանր ապրումներ ունենալ, իսկ մեր ժողովուրդը, զուր պատկերացրեք, կանգնած էր դիլեմայի առջև. մի կողմից՝ հուսախաբությունը, մյուս կողմից՝ հարցի լուծման ձգձգումը, նրան՝ աշ-

խատող մարդուն, հավասարակշռությունից դուրս էին բերել: Արցախցին տեսեք ինչ աստիճանի է հասել, որ ստիպված զաղարեց աշխատելուց: Բայց այսօր շախատելը մեզ կործանում է տանում, այսինքն՝ այն, ինչ ուզում են մեր պրոբլեմի լուծման հակառակորդները: Ուժասպառ, թույլ, առանց նյութական բազայի արդյո՞ք մենք կարող ենք շարունակել մեր պայքարը: Երբե՞ք: Դեռևս ոչ թե լնացման շրջանից մնացած, այլ այսօր էլ գարշահոտ ճահճի մեջ կեդատող գաղափարներով պաշտոնյաներ, ազգայնամուժ-մտավորականներ կան, որ ամեն կերպ քարոզում են խափանել մեր շարժումը: Մենք ուժ պետք է ունենանք, որ կարողանանք շարդել այն պատենը, որ ընկած է մեր պայքարի ճամփի վրա:

Նրանց, ովքեր չեն հասկանում այսքանը և խանգարում են մարդկանց աշխատանքի դուրս գալու, ամեն կերպ ջանում ենք հասկացնել, համոզել, որ այլ ուղի չունենք: Պայքարի ընթացքում հաճախ են փոխվում մարտնչելու ձևերն ու մեթոդները: Մենք համոզվել ենք, որ գործադուլով ոչնչի չենք հասնի, այսօր զարդեն փաստ է: Պայքարը պետք է շարունակել աշխատանքով, գիտակցված, համախմբված: Պետք է բոլորը լավ հասկանան, որ մեր ուժը մեր միասնության մեջ է: Այս է մեր պայքարի սկզբունքը, այս սկզբունքով է աշխատում Ազգային խորհուրդը:

Մեր ժողովուրդը հասկացող, կըշտողատող, ողջամիտ ժողովուրդ է: Համոզված եմ, որ նա լրջախորհրդավոր կըմբռնի հարցի կարևորությունը և կշարունակի աշխատանքը հանուն մեր մեծ նպատակի իրագործման:

ԹՂԹ.— Ձեզ, որպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ղեկավար, երկի շատերն են դիմում այս հարցով. ի՞նչ եք սպասում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանից: Արդյո՞ք կիրակա-

նաեան մեր սպասումները:

Վ. Գ.— Մինչև Գերագույն խորհրդի նստաշրջանը քիչ ժամանակ է մնացել: Մենք՝ բոլոր արցախցիներս, լավատես ենք և սպասում ենք մեր պրոբլեմի գրական լուծման հույսով: Մինչդեռ մեր պահանջի հակառակորդները (աղբյուրակալ ղեկավարությունը և Աղբյուրակալի մի խումբ ազգայնամուժ-մտավորականներ) ամեն ինչ անում են հարցի ոչ դրական լուծման համար, ձախողելու, օրակարգից հանելու գաղափարային պրոբլեմը: Առայսօր մեր հարաբերությունները աղբյուրակալ կողմի հետ մեռում են խիստ լարված վիճակում: Հատկանշական է, որ ինչքան մոտենում է նստաշրջանը, այնքան բարդանում են մեր հարաբերությունները: Հարցի վճռման ձգձգումը միայն վնաս բերեց երկու ժողովուրդների զարգացման հարևանությանը: Գրությունը բարդացել է արհեստական ձևով: Այսպես թե այնպես՝ այլևս ձգձգման տեղ չկա, անկարելի է հետաձգելը, այն լի է վտանգավոր հետևանքներով: Համոզված եմ, որ Գերագույն խորհրդի աշխատանքային նստաշրջանում անպայման կթնկվի մեր հարցը: Գերագույն խորհրդի հանձնաժողովը ԼՂԻՄ-ում իր ստուգումների արդյունքների մասին ղեկուցել է և այժմ առաջարկություններ է պատրաստում: Այն համոզման եմ, որ հարցի քննարկումը դուրսին լի լինելու, քանզի կողմերի տեսակետները տրամադորեն հակադիր են: Վճիռը կլինի, բայց որպես ղեկավար ինչպես կլինի այն:

ԹՂԹ.— Այժմ մի փանի խոսք մարզի շրջափակման մասին: Ի՞նչ ուղիներ կան աղբյուրակալ կողմի հետ երկխոսության մեջ մտնելու, մարզը շրջափակումից դուրս բերելու համար:

Վ. Գ.— Իրոք, ծայրահեղ, տաղանապալից վիճակում է գտնվում (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ԼՂԻՄ. ԱԶԳԱՅԻՆ

## ԽՈՐՀՈՒՐԴ,

## ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳՍ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Արցախ աշխարհը: Այն շորս կողմից շրջափակման մեջ է, և այդ մասին «Երեկոյան Երևանը» լավ գրեց: Ինչպես վկայում են փաստերը, մարզում և նրա շուրջը դրույթունն ավելի է բարդացել, սարվել: Ադրբեջանական կառավարությունը, նրա ղեկավարությունը իրենց կողմից ոչինչ չեն անում դրանք կանխելու, նորմալացնելու համար, եթե շատեր, որ նույնիսկ նպաստում են այն ավելի ծայրագույնին հասցնելու: Այսպիսի պայմաններում մեր անելիքները կրկնապատկվում են, ստանում ավելի լուրջ բնույթ: Մարզը լիովին պաշարման մեջ է: Թե այսօր ինչ է կատարվում մեր շուրջը՝ դժվար է կանխագուշակել, եթե համապատասխան մարմինների կողմից շուտափույթ միջոցներ չձեռնարկվեն, իրոք, որ հետևանքները կհանգեն անասելիին:

Ազգային խորհրդի նախագահությունն իր ողջ կազմով եղավ հատուկ կառավարման կոմիտեի նախագահ՝ Արկադի Իվանովիչ Վոլսկու մոտ: Հանգամանորեն տեղյակ դարձրինք մարզում տիրող դրույթյան և նրա անկանխատեսելի հետևանքների մասին: Կոմիտեն խոստացավ մարզկենտրոն հրավիրել սահմանամերձ ադրբեջանական շրջանների ղեկավարությունը և հանրապետության կուսակցության կենտկոմի քարտուզարին: Սակայն վերջիններս հրաժարվեցին Ստեփանակերտ գալուց: Ներկայացել էր Ադրբեջանի կուսկենտկոմի ներկրող քարտուզար Վ. Պոլյանիչկոն: Նրանից պահանջվեց հարց դնել ադրբեջանական կուսակցության ղեկավարության առաջ՝ անհապաղ լեռնային Ղարաբաղը դուրս բերել շրջափակումից, այլապես մեր մարզի շրջանների կողմից, ի պատասխան դրա, կփակվեն Լաչինի, Շուշվա, Քերրաշայի, Ֆիզուլու և մարզին սահմանակից մյուս շրջանների ավտոտրանսպորտային ճանապարհները: Պահանջվեց կարգավորել մարզի ժողովրդական տնտեսության համալսարանի ապահովման համար հատկացված ֆոնդերի լրիվ մատակարարումը, հակառակ պարագայում մարզը հարկադրված կլինի ձեռնարկել պատասխան միջոցներ:

ԽՈՐՀՈՒՐԴ ՆԳ մինիստրի տեղակալ Ի. Շիրովը, որը գտնվում էր Ստեփանակերտում, իր հերթին հեռագրել էր մեր հարևան շրջանների ՆԳ բաժինների պետերին, որոնք նույն ձևով հրաժարվեցին կատարելու մինիստրի կարգադրությունը և չներկայացան Ստեփանակերտ: Այս վերաբերմունքը ինքնին շատ բան է ասում:

ԹՂԹ. — Ասել է քե սառ պատերա՞զմ է հայտարարված:

Վ. Գ. — Գուցե և ավելին: Ես միայն կխնդրեի իմ հայրենակից արցախցիներին՝ առանց երկմտելու, առանց հապաղելու վերադառնալ աշխատատեղերը, հենց այնտեղ՝ աշխատատեղում, մարդկանց բացատրել իրադրույթունն ինչպես կա: Զպետք է ոչինչ թաքցնել, թաքցնելը կործանում է: Պետք է աշխատավայրերում նախապատրաստական աշխատանք տանենք ամեն տեսակի պրոֆոկացիաներին հակահարված տալու համար: Հետո ուշ կլինի Եղե՞ք ողջախոհ, իմ հայրենակիցներ, չէ՞ որ սե ամպեր են կուտակվել մեր Արցախ աշխարհի գլխին:

ԹՂԹ. — Իսկ ո՞ւր է խորհրդային իշխանությունը:

Վ. Գ. — Մեր այս վիճակի մասին գիտե ամբողջ երկիրը, գիտեն կուսակցական և խորհրդային կենտրոնական ղեկավար մարմինները: ԽՈՐՀՈՒՐԴ Գերագույն խորհրդի գեղարտատեսները: Գիտեն... Մեզ

մեռավ է մինչև Գերագույն խորհրդի աշխատանքին նստաշրջանը ցուցաբերել զսպվածություն ու ամենակարևորը՝ տոկունություն, բարձր կազմակերպվածություն: Կրկնում եմ, մենք ապրում ենք ծայրահեղ լարված պայմաններում: Սա մեծ քննության շրջան է ամեն մի արցախցու համար: Պետք է հասկանալ, որ ամեն մի շրջանում մտածված քայլ կարող է լուրջ վնաս հասցնել մեր ընդհանուր գործին, այն սուրբ գործին, որին սպասում են մեր երեխաները, մեր կանայք, մայրերն ու հայրերը, ամբողջ հայ ժողովուրդը: Ես դարբազցիներին ասում եմ՝ եկեք գործենք միասին, մտածված ու կազմակերպված, համախմբված մեր Ազգային խորհրդի շուրջը: Մեր միասնության մեջ է մեր ուժը, մեր երկրամասի բախտը:

ԹՂԹ. — Եվ, վերջապես, վերջին հարցը: Ձեր անձնական կարծիքը «կուսակցության ազգային ֆառափակեցությունը արդի պայմաններում» ԽՄԿԿ կենտկոմի ծրագրի նախագծի մասին, որ ֆենեարկման է պատրաստվում ԽՄԿԿ կենտկոմի առաջիկա պլենումում:

Վ. Գ. — Ազգային հարցը մեր նախկին ղեկավարների բարձրագույն ճառերում հաշվվում էր լուծված, բայց այն երբեք չի լուծվել, այլ ընդհակառակը, ավելի է խորացել: Քննարկման ներկայացված նախագծում վիճելի դրույթներ չառ կան: Կանկրետ՝ լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի պրորենը շպետք է նմանեցնել Ղրիմի թաթարների, Պոլոտիեի գերմանացիների, հույների, քրդերի, կորեացիների և մյուսների պրորենների հետ:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար (հայկական) Մարզը ԽՍՀ Միության մեջ ունի իր ազգային հայկական հանրապետությունը: Մի պետության մեջ միևնույն ազգը երկու մասի բաժանված պահելը հանցագործություն է, սխալ: Մենք ազգային ոչ ինքնավարություն ենք պահանջում, ոչ հանրապետություն: Մենք պահանջում ենք 1920 թվականի սխալն ուղղել, մեր հարցին տալ քաղաքական լուծում: Ինչո՞ւ վերեներում չեն ուզում հասկանալ մեզ՝ զարմանալի է: Դրա համար մեծ տեսություններ պետք չեն: Դպրոցական երեխան էլ գիտի, որ մի պետության մեջ հարակից սահմաններով (անջատված արհեստական սահմաններով) չեն բաժանում մի լեզվի, մշակույթի, կենցաղի, բարքերի, ավանդույթների տեր ազգը: Նույն ազգը: Այս հարցով չեմ ուզում բացվել, քննարկումը ցույց կտա:

ԹՂԹ. — Ենթահայտնություն, Վաչագան Սանթրուքի: Կցանկանեմ Ձեր գլխավորած Ազգային խորհրդին բարի գործեր Արցախ աշխարհի բնակչության վեհ նպատակներին ստատոս ձեռնարկ համար: Կցանկանեմ միաժամանակ, որ Արցախ աշխարհի բնակչությունը մեծ ըմբռնումով հասկանա Ազգային խորհրդի դերը: Մեծ երվանում է, որ այսօր արցախցիներն ունեն իրենց հովանին՝ Ազգային խորհուրդը: Թող երանք իրենց աշխատատեղերում, ողջախոհությամբ օգնեն խորհրդին՝ իրացնելու համագումարի որոշումը, ավելի շատ բնակելի տներ կառուցելու, Արցախում գտնվող 30 հազար փախստականներին բնակելի տներով ապահովելու, երանց Արցախի կենտրոն հողի հետ մրջտական կապելու և ամենագլխավոր՝ կյանքում իրականացնելու համայն արցախյան աշխարհի, մեծից մինչև փոքր, նվիրական երազանքը՝ մայր Հայաստանի հետ վերամիավորումը:

Հարցազրույցը վարեց  
Լ. ՄԿՐՏՉՅԱՆԸ  
(մեր սեփ. քղբ.)